ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 127-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2022ԹՎԱԿԱՆԻՆ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ 2023ԹՎԱԿԱՆ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ 2022թվականի համար նախատեսված հիմնական միջոցների օտարումներից ակնկալվող եկամուտները չեն կատարվել և որ 2022թվականին կատարվել են չնախատեսված բազմաթիվ հրատապ այլ ծրագրեր, Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

Առաջարկել Արենի համայնքի ղեկավարին.

1. Արենի համայնքում 2022թվականի սուբվենցիոն ծրագրերով իրականացավող շինարարական աշխատանքների կապալառու կազմակերպությունների հետ կնքել համաձայնագրեր, ըստ որի շինարարական աշխատանքները կատարվում են ամբողջությամբ, բայց վճարումները կատարվում են 2023թվականին, կամ աշխատանքների կատարման ժամկետները երկրաձգվում են մինչև 2023թվականի առաջին կիսամյակի վերջ:

2. Դիմել ՀՀ կառավարություն սահմանված կարգով սուբվենցիոն շրագրերով իրականացված և ավարտված շինարարական աշխատանքների մասով կառավարության մասնաբաժինը վճարելու խնդրանքով:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**